ՆԱԻՐԻ
ինշուրանս

*ՀԱՍՏԱՏՎԱԾ Է*
*Տնօրինություն 02.06.2022թ. թիվ 18 որոշմամբ*

# «VISITOR MEDICAL INSURANCE» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Խմբագրություն՝ VI03
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

## 1. Ի՞ՆՉ Է «VISITOR MEDICAL INSURANCE» ԾՐԱԳԻՐԸ

«VISITOR MEDICAL INSURANCE» ծրագիրն առաջարկում է առողջության և դժբախտ պատահարներից ապահովագրություն՝ նախատեսված մինչև 85 տարեկան օտարերկրյա քաղաքացիների համար:

## 2. Ի՞ՆՉ ՓԱԹԵԹՆԵՐ Է ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

| Ծածկույթ | Փաթեթներ | |
|---|---|---|
| | ԿՈՄՖՈՐՏ | ՊՐԵՄԻՈՒՄ |
| ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ | 3 000 000 ՀՀ դրամ | 7 000 000 ՀՀ դրամ |
| ՏԱՐԵԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ | 78 000 ՀՀ դրամ | 225 000 ՀՀ դրամ |
| Ծառայություններ՝ | | |
| 2.1 ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԲՈՒԺՁՆՆՈՒՄ | ✓ | ✓ |
| 2.2 ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ✓ | ✓ |
| 2.3 ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ✓ | ✓ |
| 2.4 ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ✓ | ✓ |
| 2.5 ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՆԱՄՔ | ✗ | ✓ |
| 2.6 ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ | ✗ | ✓ |
| 2.7 ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ | ✗ | ✓ |
| 2.8 ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ✗ | ✓ |
| 2.9 ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾՆՆԴՕԳՆՈՒԹՅՈՒՆ | ✗ | ✓ |
| 2.10 ԱՏԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ | ✗ | ✓ |
| 2.11 ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ✗ | ✓ |

## 2.1. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԲՈՒԺԶՆՆՈՒՄ* /*տարեկան 1 (մեկ) անգամ*/

**Խորհրդատվություններ.**

- ✓ Թերապևտի խորհրդատվություն
- ✓ Ակնաբույժի խորհրդատվություն
- ✓ Գինեկոլոգի կամ ուրոլոգի խորհրդատվություն

**Գործիքային հետազոտություններ.**

- ✓ Որովայնի օրգանների ՈւՁՀ
- ✓ Փոքր կոնքի օրգանների ՈՒՁՀ
- ✓ Վահանաձև գեղձի ՈՒՁՀ
- ✓ Կրծքագեղձի ՈՒՁՀ
- ✓ Էլեկտրասրտագրություն
- ✓ Էխոսրտագրություն /ցուցման դեպքում/

**Լաբորատոր հետազոտություններ.**

- ✓ Արյան ընդհանուր քննություն
- ✓ Մեզի ընդհանուր քննություն
- ✓ Գլյուկոզայի մակարդակի որոշում արյան մեջ
- ✓ Լիպիդային պրոֆիլ (խոլեստերին)
- ✓ PAP-քսուք PAP թեստ (կանանց համար)
- ✓ PSA (45 տարեկանից բարձր տարիքի տղամարդկանց համար)

## 2.2. ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

✓ **Նեղ մասնագետի առաջնային և կրկնակի խորհրդատվություն** (թերապևտ, սրտաբան, գինեկոլոգ, ուրոլոգ, ողնաշարաբան, պրոկտոլոգ, ԼՕՌ, էնդոկրինոլոգ, վիրաբույժ և այլն)

✓ **Գործիքային հետազոտություններ** (ուլտրաձայնային հետազոտություններ՝ սոնոգրաֆիա, դուպլեքս և ռենտգեն ծառայություն, կոլոնոսկոպիա, գաստրոսկոպիա և այլն)

✓ **Լաբորատոր հետազոտություններ** (ընդհանուր կլինիկական, բիոքիմիական, հորմոնալ, օնկոմարկեր և այլն):

*Փոխհատուցումն իրականացվում է միայն այն դեպքում, երբ նշված հետազոտությունները գրավոր հիմնավորմամբ ցուցված են ընտրված գործընկեր բժշկական կենտրոնի բժշկի կողմից:*

## 2.3.ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

✓ **Մարմնական վնասվածներ**՝ դժբախտ պատահարի հետևանքով,

✓ **Հանկարծակի սուր թունավորում,**

✓ **Հաշմանդամության 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի, «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռքբերում**՝ դժբախտ պատահարի հետևանքով,

✓ **Մահ**՝ դժբախտ պատահարի հետևանքով, այդ թվում՝ շնչահեղձումից՝ շնչուղիներ օտար մարմին ընկնելուց, ջրահեղձումից, անաֆիլակտիկ շոկից, մարմնի գերսառեցումից:

Ապահովագրական հատուցումներն իրականացվում են հետևյալ սահմանաչափերով՝

- *մարմնական վնասվածքների և կոտրվածքների դեպքում՝ բժշկի ցուցումով փաստացի կատարված բժշկական ծախսերի չափով, բայց ոչ ավել, քան ապահովագրական գումարի 50%-ը,*
- *Հաշմանդամության 1-ին խմբի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 100%-ի չափով,*
- *Հաշմանդամության 2-րդ խմբի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 75%-ի չափով,*
- *Հաշմանդամության 3-րդ խմբի կամ «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 50%-ի չափով,*
- *Մահվան դեպքում՝ Ապահովագրական գումարի 100%-ի չափով:*

## 2.4.ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՂՉԵՐ՝ համագործակցող ատամնաբուժական կենտրոններում
- ✓ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՂՉԵՐ՝ համագործակցող բժշկական հաստատություններում
- ✓ ՕՊՏԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՂՉԵՐ՝ համագործակցող օպտիկայի խանութ-սրահներում
- ✓ ԷՍԹԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՂՉԵՐ՝ համագործակցող էսթետիկ կենտրոններում
- ✓ ՖԻԶԻՈԹԵՐԱՊԵՎՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՂՉԵՐ՝ համագործակցող ֆիզիոթերապևտիկ կենտրոններում
- ✓ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ:

## 2.5.ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՆԱՄՔ

- ✓ **Սուր և անհետաձգելի հիվանդությունների ու վիճակների թերապևտիկ և վիրահատական բուժում** (այդ թվում՝ ստացիոնարում գտնվելու ժամանակ կատարվող լաբորատոր և գործիքային հետազոտություններ) *տարեկան մեկ վիրահատություն, մինչև 300 000 ՀՀ դրամ*
- ✓ **Ներհիվանդանոցային դեղորայքի, բժշկական պարագաների և վիրակապական նյութերի ծախսերի հատուցում**՝ *տարեկան մինչև 30 000 ՀՀ դրամ*
- ✓ **Ինտենսիվ թերապիա և ռեանիմացիոն միջոցառումներ պահանջող անհետաձգելի վիճակների բուժում**՝ *առավելագույնը 10 օրվա համար*
- ✓ **Վճարովի հիվանդասենյակների տրամադրում**՝ *առավելագույնը 10 օր, յուրաքանչյուր օրը 15 000 դրամի չափով:*

## 2.6. ՇՏԱՊ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- ✓ Շուրջօրյա հեռախոսակապ բժիշկ-փորձագետի հետ
- ✓ Շտապ օգնության ծառայություն
- ✓ Հոսպիտալացում մասնագիտացված բրիգադայի ուղեկցությամբ
- ✓ Նեղ մասնագիտական առաջնային բուժզննում և օգնություն
- ✓ Էքսպրես-դիագնոստիկա:

## 2.7. ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄ

- ✓ **Ստացիոնար բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումներ**՝ տարեկան երկու անգամ
- ✓ **Ամբուլատոր բուժում պահանջող քրոնիկ հիվանդությունների սրացումներ**՝ տարեկան երկու անգամ
- ✓ **Քրոնիկ հիվանդությունների դինամիկ հսկողության համար նախատեսված խորհրդատվություններ և հետազոտություններ**՝ տարեկան մինչև 20 000 ՀՀ դրամ:

## 2.8. ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

- ✓ Ակնաբույժի խորհրդատվություններ, հետազոտություններ, ախտորոշում
- ✓ Աչքի բազմատեսակ վնասվածքների և հիվանդությունների բուժում թերապևտիկ և վիրաբուժական եղանակներով
- ✓ Օպտոմետրիա (տեսողության ստուգում)
- ✓ Օպտիկական ապակու/լինզաների, շրջանակների տրամադրում՝ տարեկան 15 000 ՀՀ դրամ
- ✓ Աչքի լազերային (FEMTO LASIK) վիրահատության միջոցով տեսողության շտկման համար անհրաժեշտ նախավիրահատական հետազոտությունների և վիրահատության արժեքից 100 000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում՝ Ապահովագրողի կողմից ցուցված բժշկական կենտրոնում:

## 2.9. ՀՂԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾՆՆԴՕԳՆՈՒԹՅՈՒՆ */տարեկան մինչև 60 000 ՀՀ դրամ/*

- ✓ Հղիության հսկողություն
- ✓ Ծննդօգնություն՝ ներառյալ կեսարյան հատում
- ✓ Պաթոլոգիկ ընթացքով հղիության պահպանում ստացիոնար պայմաններում, այդ թվում՝ հակառեզուսային իմունոգլոբուլինի ներարկումներ
- ✓ Հղիության ընդհատում բժշկական ցուցումներով
- ✓ Հետծննդաբերական ծախսեր՝ *մինչև 15 000 ՀՀ դրամ:*

## 2.10. ԱՏԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ*

**Ախտորոշում և թերապիա** */տարեկան երկու ատամի բուժում/*

- ✓ Ռենտգեն
- ✓ Օրթոպանտոգրամա
- ✓ Համակարգչային տոմոգրաֆիա
- ✓ Կարիեսի և/կամ դրա բարդությունների բուժում
- ✓ Ուղիների մշակում
- ✓ Պլոմբավորում լուսակարծրացող պլոմբանյութով

**Վիրաբուժություն** */տարեկան երկու ատամի բուժում/*

- ✓ Ատամի պարզ հեռացում
- ✓ Ատամի բարդ հեռացում
- ✓ Իմաստության ատամի հեռացում

**Պրոֆիլակտիկա** */տարեկան մեկ անգամ/*

- ✓ Ատամնաքարերի մաքրում

## 2.11. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- ✓ Թերապևտի խորհրդատվություն՝ բուժման նշանակմամբ
- ✓ Ռենտգեն հետազոտություն
- ✓ Արյան ընդհանուր հետազոտություն
- ✓ C-ռեակտիվ սպիտակուցի (CRP) թեստ

** Փոխհատուցվում են միայն գործընկեր բժշկական հաստատությունների համապատասխան ցանկից ընտրված բժշկական կենտրոնում ստացված ծառայությունների ծախսերը:*

## 2. Ի՞ՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ապահովագրվող անձի անձը հաստատող փաստաթուղթ

## 3. ԾՐԱԳՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ✓ Առկա հիվանդությունների ախտորոշում, բուժման նշանակում
- ✓ Բժշկական ծառայությունների ստացման գործընթացի կազմակերպում
- ✓ Տրամադրված բժշկական ծառայությունների որակի վերահսկում
- ✓ Զեղչերի տրամադրում գործընկեր բժշկական հաստատություններում
- ✓ Անհատական բժիշկ փորձագետի ծառայություն
- ✓ Շուրջօրյա հեռախոսակապ բժիշկ փորձագետի հետ

*ԿՈՄՖՈՐՏ փաթեթը կարգավորվում է Ընկերության Խորհրդի կողմից հաստատված ««Առողջ անհատ» ապահովագրության պայմաններ»-ով,*

*ՊՐԵՄԻՈՒՄ փաթեթը կարգավորվում է Ընկերության Խորհրդի կողմից հաստատված «Առողջության կամավոր ապահովագրության կանոններ»-ով և «Դժբախտ պատահանրից ապահովագրության պայմաններ»-ով:*